

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող տեղեկատվության հավաստիության մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 14-ի №253Ն որոշման հավելվածով հաստատված՝ էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգի իրականացման կարգը, ինչպես նաև հանձնաժողովի 2018 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 28-րդ կետը:

Մոնիթորինգի օբյեկտը.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) և Ընկերության մասնաճյուղերը:

Մոնիթորինգի առարկան.

1. Ընկերության կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության հավաքագրման համապատասխան ընթացակարգերի առկայությունը.
2. Տեղեկատվության հավաքագրման գործընթացի համապատասխանությունը սահմանված ընթացակարգերին.
3. Սկզբնական փաստաթղթերում գրանցված տեղեկատվության համապատասխանությունը հանձնաժողով ներկայացված տեղեկատվությանը:

Մոնիթորինգի նպատակը.

Ընկերության կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվող էլեկտրական էներգիայի առևտրային հաշվառքի սարքի ստուգաչափման արդյունքում կատարված վերահաշվարկներին առնչվող տեղեկատվության հավաստիության ուսումնասիրություն և «Առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում Ընկերության կողմից կատարված

վերահաշվարկների և հաշվարկված տույժերի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 25-ի N°294Ա որոշմամբ սահմանված ձևերին համապատասխան ներկայացվող տեղեկատվության հավաստիության ստուգում:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2018 թվականի ապրիլի 5-10-ը:

Մոնիթորինգի արդյունքները.

1. Ընկերությունում առկա է տեղեկատվության հավաքագրման և ներկայացման ընթացակարգ:
2. Ընկերության կողմից տեղեկատվության հավաքագրման գործընթացը համապատասխանում է սահմանված ընթացակարգին:
3. Ընտրանքային ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է էլեկտրական էներգիայի վերահաշվարկների՝ ԷՄՕԿ-ով սահմանված կարգի 19 շեղման դեպք, որի արդյունքում սակայն վերահաշվարկված էլեկտրաէներգիայի քանակությունները չեն փոփոխվել: Ընկերությունն իր 2018 թվականի մայիսի 5-ի N°04-ԿՀ-04/1489 գրությամբ հայտնել է, որ նշված 19 վերահաշվարկի դեպքերի արձանագրությունները կշտկվեն՝ ԷՄՕԿ-ի 58.2-րդ կետը կփոխարինվի 54-րդ կետով:
4. Սկսած 2018 թվականի ապրիլի 1-ից, առևտրային հաշվառքի սարքերի խախտման հետևանքով կատարված վերահաշվարկների ողջ տեղեկատվությունը մշակվում, ամփոփվում և պահպանվում է համապատասխան համակարգչային ծրագրով:
5. Ընկերությունում գործում է գլխավոր տնօրենի հրամանով սահմանված վիճահարույց հարցերի քննարկման հանձնաժողով, որը քննության է առնում սպառողների կողմից վերահաշվարկների վերաբերյալ բողոքները, կատարում է համապատասխան ճշգրտումներ և դրանց մասին սահմանված ժամկետներում տեղեկացնում սպառողներին: